ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 2016Թ.-Ի ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 1-Ի ԿԻՍԱՄՅԱԿԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի 2016թ.-ի 1-ի կիսամյակի ծրագրի շրջանակներում ներքին աուդիտի բաժնի կողմից նախատեսվել և իրականացվել է 17 աուդիտ, որից 11 միավոր մարզային ենթակայության հանրակրթական ՊՈԱԿ-ներում, 4 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՊՈԱԿ-ներում,1 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ներում,1 միավոր մարզպետարանի գնումների գործընթաց :ՊՈԱԿ-ներում,ՓԲԸ-ներում իրականացվել է ֆինանսական աուդիտ ,մարզպետարանի աշխատակազմում ՝ գնումների գործընթացի գնումների օրենսդրությանը համապատասխանության աուդիտ , գործունեության ոլորտը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության աուդիտ:Նշված ՊՈԱԿ-ներում,ՓԲԸ-ում և գնումների գործընթացի աուդիտի ստանդարտների համաձայն, այդ թվում բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները :Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը,գործունեության իրավական ակտերին համապատասխանությանն առնչվող բոլոր գործառույթները: Հրավիրվել է Ներքին աուդիտի կոմիտեի 4 նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները,կայացվել համապատասխան որոշումներ :Աուդիտի ենթարկված ՊՈԱԿ-ների,առողջապահական ՓԲԸ-ի և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման ղեկավարներին տրվել են հանձնարարականներ,ներկայացվել առաջարկություններ արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ:Միաժամանակ այդ ուղղությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է խորհրդատվություն և վերահսկողության գործընթաց:

Աուդիտի հաշվետվությունները տեղադրվել են Վայոց ձորի մարզպետարանի vdzor.gov.am պաշտոնական կայքում, ստուգումների արդյունքներ բաժնում:

Ներքին աուդիտի բաժնի կողմից ամբողջությամբ կատարվել է 2016 թ.-ի ներքին աուդիտի 1-ի կիսամյակի ծրագիրը:

Հաշվետվությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի, ծրագրային մուտքագրմամբ ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան